ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա հուլիսի 17-ին ժամը 14:00-ին

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի նիստի թիվ 4 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր 3 թերթ:

Խորհրդի նախագահ՝ Ա. Գրիգորյան

22.05.2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 4-09642-2020
22 05 2020 թ.

Քաղվածք

<<ՀԱՅԿԱՇԵՆԻ Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ 2020Թ. մայիսի 22-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ N 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԼՍԵՑԻՆ.

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի որոշումը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին՝ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:
   Մրցույթը նշանակել 2020թ. հուլիսի 17-ին 14:00-ին

2.Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարին և Արմավիրի մարզպետին:

Խորհրդի նախագահ՝ Ա. Գրիգորյան

Հայտարարություն

«ՀՀ Արմավիրի մարզի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձրագույն կրթությունը
3. ՈՒսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
5. Հրապարակած հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում),
6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. հունիսի 9-ից մինչև հուլիսի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Փաստաթղթերն ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա 2020թ. հուլիսի 17-ին ժամը 14:00-ին՝ Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ գ. Հայկաշեն, 3-րդ փողոց,4-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 098472080 հեռախոսահամարով:

ՀՀ Արմավիրի մարզի
<<Հայկաշենի միջնակարգ դպրոց>>